Ալեքսանդր Ծատուրյան

Սոնետ

Թո՛ղ քեզ աշխարհը այս ունայնասեր
Ծաղրե կուրորեն, նազելի՛ ընկեր,
Որ դու քո շքեղ այդ փարթամ կյանքում
Միայն իմ անզարդ երգն ես դու սիրում:

Թո՛ղ սերն անարգող մարդիկ անզգա
Քեզ կոչեն «անփորձ, անմիտ երեխա»,
Եվ մատաղ սրրտիդ թախիծն ու հրճվանք
Համարեն հիվանդ հոգու զառանցանք:

Անվերջ չէ փայլը շլացնող ոսկու
Վաղ-ուշ սև ժանգն է նորան պատելու,
Բայց անշահ սերը, որպես վառ արև,
Պայծառ կըշողա անվերջ, հարատև:

Եվ քո անունը, մանո՛ւկ աննման,
Իմ պարզ երգերում կապրի հավիտյան:

1886, 3 դեկտեմբերի